Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.165

Pecularities of Azerbaijan's political culture after 2020 Third Artsakh War: the symbol of "Iron Fist"

Varuzhan Geghamyan
https://orcid.org/0000-0001-8090-359X
PhD in History, Associate Professor, Chair of Turkic Studies, Faculty of Oriental Studies, Yerevan State University
vgeghamyan@ysu.am

Edgar Elbakyan
YSU faculty of history candidate to the department of armenian history
elbakyan.edgar@gmail.com

Keywords*:* Political History of Azerbaijan, Armenian-Azerbaijani conflict, Artsakh Issue, Artsakh War, authoritarianism, symbols.

The article examines the newly constructed symbol of the "iron fist" from a semiotic point of view and discusses its place in the political culture of Azerbaijan. The Azerbaijani authorities started to construct the "iron fist" as an unofficial symbol. This symbol since the end of 2020 has acquired several discursive meanings, which are related to the Third Artsakh War and directed at internal and external audiences. These discursive meanings have a strong anti-Armenian character and serve as a tool to raise the legitimacy of the foreign and domestic policies implemented by the Azerbaijani authorities, as well as to ensure broad mobilization around them.

Ադրբեջանի քաղաքական մշակույթի առանձնահատկությունները 2020 թ. Արցախյան երրորդ պատերազմից հետո. «երկաթե բռունցքի» խորհրդանիշը[1]

Վարուժան Գեղամյան
ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Էդգար Էլբակյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հայոց պատմության ամբիոնի հայցորդ

[1]Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿ-ի 20RF-189 և ՀՀՌՀ (ՌԴ) 20-59-05006 գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:
History and Culture Vol.-21(2), 2024, pp. 165-175.

Received: 05.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 21.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Pecularities of Azerbaijan's political culture after 2020 Third Artsakh War: the symbol of "Iron Fist"

Ադրբեջանի քաղաքական մշակույթի առանձնահատկությունները 2020 թ. Արցախյան երրորդ պատերազմից հետո. «երկաթե բռունցքի» խորհրդանիշը

Հիմնաբառեր՝ Ադրբեջանի քաղաքական պատմություն, հայ-ադրբեջանական հակամարտություն, Արցախյան հիմնահարց, Արցախյան պատերազմ, ավտորիտարիզմ, խորհրդանիշ:

Հոդվածում սեմիոտիկ քննության է ենթարկվում «երկաթե բռունցքի» նորաստեղծ խորհրդանիշը՝ ներկայացնելով դրա տեղը Ադրբեջանի քաղաքական մշակույթում: Կերտվելով իշխանությունների կողմից որպես ոչ պաշտոնական խորհրդանիշ՝ 2020 թվականից ի վեր այն ձեռք է բերել մի քանի խոսույթային իմաստներ, որոնք կապված են Արցախյան երրորդ պատերազմի հետ և ուղղված են ներքին ու արտաքին լսարանների: Այդ խոսույթային իմաստները ունեն ընգծված հակահայկական բաղադրիչ և ծառայում են որպես Ադրբեջանի իշխանությունների կողմից վարվող ներքին և արտաքին քաղաքականության լեգիտիմության բարձրացման և այդ քաղաքականության շուրջ հանրային լայն մոբիլիզացիայի ապահովման գործիք:

Особенности политической культуры Азербайджана после Третей Арцахской войны 2020 г.: символ «Железного кулака»

Варужан Гегамян

к.и.н., доцент Кафедры тюркологии факультета востоковедения Ереванского государственного университета

Эдгар Элбакян

ЕГУ исторический факультет кандидат кафедры истории армении

Ключевые слова: политическая история Азербайджана, армяно-азербайджанский конфликт, Арцахский вопрос, Арцахская война, авторитаризм, символы.

В статье с семиотической точки анализируется ново созданный символ «железного кулака» и обсуждается его место в политической культуре Азербайджана. Власти Азербайджана начали конструировать «железный кулак» как неофициальный символ. Этот символ начиная с конца 2020 года приобрел несколько дискурсивных смыслов, которые связаны с Третей Арцахской войной и направлены на внутреннюю и внешнюю аудитории. Эти дискурсивные смыслы имеют подчеркнуто антиармянский характер и служат в качестве инструмента для поднятия легитимности реализуемой властями Азербайджана внешней и внутренней политики, а также обеспечения широкой мобилизации вокруг них.

* * *

Ներածություն: 2020 թ. դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի կենտրոնական «Ազատության» հրապարակում տեղի ունեցավ Արցախյան երրորդ պատերազմում Ադրբեջանի տարած հաղթանակին նվիրված ռազմական շքերթ: Շքերթը, բացի նախագահ Իլհամ Ալիևից, ընդունում էր նաև Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Այս միջոցառումը լուսաբանող բազմաթիվ մեդիահրապարակումներում աչքի էր զարնում հրապարակի անմիջական հարևանությամբ գտնվող շենքի վրա փակցված մեծ չափերի պաստառը, որի վրա գրված էր «Ղարաբաղը Ադրբեջան է: // Նոյեմբերի 8: // Հաղթանակի օր» [Qarabağ Azərbaycandır! 8 Noyabr. Zəfər günü]: Պաստառի վրա գրությունից զատ պատկերված էր նաև զինվորական համազգեստ հագած մարդու արմունկի և օդ բարձրացած բռունցքի մեծ նկար: Հենց այս պաստառի ներքո էին հրապարակ մտնում շքերթի մասնակից զինվորականները և ռազմական տեխնիկան, ինչը լուսաբանվում էր տասնյակ զլմ-ների կողմից: Այդպիսով, մշտապես գտնվելով տեղում ու տեսագրությամբ շքերթին հետևող դիտողների ուշադրության կենտրոնում, բռունցքի պատկերը փաստացի կապվում էր Ադրբեջանի տարած հաղթանակի ու ռազմական ուժի հետ և ինքնըստինքյան վերածվում այդ հաղթանակի յուրատեսակ խորհրդանիշի:

Այս իրադարձությանը հետևած հաջորդող ամբողջ ժամանակահատվածում Ադրբեջանի նախագահը բազմաթիվ անգամներ է անդրադարձել վերոնշյալ բռունցքի խորհրդանիշին՝ տարբեր համաշարերում ներկայացնելով այն որպես «երկաթե բռունցք» ու որպես ազգային ու պետական խորհրդանիշ: Այսպես, 2021 թ. հունվարի 13-ին, Իսլամական համագործակցության կազմակերպությանը կից գործող Իսլամական աշխարհի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր տնօրենի հետ հանդիպմանը, վերջինից որպես հուշանվեր ստանալով երկաթե թուր, Ալիևը նշեց. «Մեր հաղթանակի խորհրդանիշը երկաթե բռունցքն էր, հիմա մենք նաև թուր ունենք» [1news.az, 2021]: Իսկ 2023 թ. դեկտեմբերի 31-ի տարեմուտի իր ավանդական ելույթում Ալիևը ասաց հետևյալը. «Այսօր «Երկաթե բռունցքը» մեր միասնականության խորհրդանիշն է» [Trend.az, 2024]:

Այս ամենը վկայում է այն մասին, որ «երկաթե բռունցքը» 2020 թվականից ի վեր վերածվել է Ադրբեջանի քաղաքական կարևորագույն խորհրդանիշներից մեկին: Ընդ որում, ինչպես կարելի է տեսնել վերոնշյալ օրինակներից, այն ունի մի քանի տարբեր խոսույթային իմաստներ, որոնք կապված են Ադրբեջանում ներկայումս տիրապետող թե՛ գաղափարական հայեցակարգերի ու հոսանքների, թե՛ քաղաքական իրողությունների հետ՝ այդպիսով հանդիսանալով Ադրբեջանի քաղաքական մշակույթի անբաժանելի մասը: Միաժամանակ այն վերածվել է նաև նախագահ Իլհամ Ալիևի գլխավորած ուժի ու անձամբ իր քաղաքական պաշտամունքը խորհրդանշող սիմվոլի, որով հավելյալ լեգիտիմություն է հաղորդվում վերջինիս իշխանությանը:

Քաղաքական համակարգերում խորհրդանիշները տարաբնույթ, սակայն իրար փոխկապակցված գործառույթներ ունեն: Դրանք կարող են լինել նույնականացման միջոցներ՝ նպաստելով խմբային գիտակցության, համերաշխության և միասնական սոցիալական ընդհանրությանը պատկանելու զգացումի զարգացմանը: Բացի այդ, խորհրդանիշները կատարում են հանրային մոբիլիզացիայի և լեգիտիմացման գործառույթներ: Բոլոր նշված գործառույթները կարելի է հավաքական միավորել խորհրդանիշի ամենակարևոր՝ հաղորդակցական գործառույթի մեջ [Колоницкий, 2001, 11-13]:

Որպեսզի մարդ կարողանա ստանալ և հասկանալ խորհրդանիշի իմաստը, «նա պետք կարողանա «կարդալ» և «թարգմանել» դրանք, պետք է զգա և հասկանա» մեջ [Колоницкий, 2001, 13]: Այդ հարցում «օգնության են գալիս» մեդիաները, մտավորականությունը և այլ դերակատարներ, որոնք շարունակաբար կառուցարկում են խորհրդանիշների իմաստ(ներ)ը [Hardy, Webber, 2007, 162]: Ընդ որում, խորհրդանիշները միաժամանակ կարող են տարբեր նշանակություններ և ընկալումներ ունենալ տարբեր «լսարանների» համար: Անհրաժեշտ է նշել նաև, որ խորհրդանիշների դերը հատկապես մեծանում է զգալի սոցիալական ու մշակութային կերպափոխումների ժամանակ (հեղափոխություններ, պատերազմներ, ընտրական գործընթացներ և այլն), որոնք իրենց հերթին ուղեկցում են քաղաքական մեծ փոփոխությունները:

Քանի որ խորհրդանիշները կարևոր դեր են խաղում հանրային ընկալումները ձևավորելու և անհրաժեշտ գաղափարական ուղերձները փոխանցելու գործում, ապա խորհրդանիշների գիտակցական կերտմամբ զբաղվում են քաղաքական դաշտի տարբեր դերակատարներ և առաջին հերթին՝ իշխանությունը [Hobsbawm, 2012, 1-14]:

Սույն հոդվածում ներկայացնում ենք Արցախյան երրորդ պատերազմից հետո «երկաթե բռունցքի» խորհրդանիշի ծագման պատմությունը, ապա ենթարկում ենք այն նշանաբանական (սեմիոտիկ) վերլուծության՝ ցուցադրելով դրա տեղը Ադրբեջանի քաղաքական մշակույթում, ինչպես նաև հակահայկական քաղաքականության համատեքստում:

«Երկաթե բռունցքի» խորհրդանիշի կերտումը և հանրայնացումը: «Երկաթե բռունցք» խորհրդանիշի հիմքում ընկած համանուն արտահայտությունը (dəmir yumruq) որպես քաղաքական դարձված հանրային քաղաքական կիրառության մեջ առաջին անգամ հայտնվել է 2020 թ. Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում: Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի Հանրապետությունների դեմ սանձազերծած պատերազմի ժամանակ նախագահ Ալիևը մի քանի անգամ հանդես եկավ Ադրբեջանի բնակչությանն ուղղված տեսաուղերձներով: Դրանցից առաջինը տեղի ունեցավ հոկտեմբերի 20-ին, երբ ադրբեջանական բանակը արդեն որոշ շոշափելի հաջողություններ էր գրանցել մարտի դաշտում՝ օկուպացնելով Արցախի Հանրապետության հարավային շրջանների մի մասը: Այս առիթով իր ելույթում Ալիևը նշեց հետևյալը. «Մեր բռունցքը ոչ միայն հարված է հասցնում թշնամուն: Մեր բռունցքը մեր միասնությունն է, մեր ժողովրդի միասնությունը, նպատակաուղղված գործունեություն, միջազգային հարթակներում մեզ համար շահեկան և արդարությունն արտացոլող որոշումների ու բանաձևերի ընդունում» [Əliyev, 20.10.2020]: Թեև այս ելույթում դեռևս չէր հիշատակվում «երկաթե բռունցք» արտահայտությունը, սակայն այնտեղ առաջին անգամ Ալիևը հանդես է գալիս աջ ձեռքի բռունցքի՝ օդում թափահարող ժեստով, որն ավելի ուշ դարձավ «երկաթե բռունցք» խորհրդանիշի կանոնական վիզուալ արտահայտությունը:

«Երկաթե բռունցք» խորհրդանիշի կերտման հաջորդ քայլը տեղի ունեցավ նոյեմբերի 8-ին, երբ Շուշի քաղաքի օկուպացիայի առիթով դիմելով ժողովրդին՝ Ալիևը նշեց. «Այս օրերին Ադրբեջանի ժողովրդին բազմիցս դիմելիս ես թշնամուն բռունցք էի ցույց տալիս... Ես ասում էի, որ սա պարզապես բռունցք չէ: Սա երկաթե բռունցք է: Այս երկաթե բռունցքով մենք ջախջախում և ջախջախելու ենք թշնամուն: Միաժամանակ այս բռունցքը մեր միասնականության խորհրդանիշն

է: Այսօր ադրբեջանական ժողովուրդը մեկ բռունցք է դարձել: Այսպես լինելու է միշտ» [Əliyev, 08.11.2020]: Արդեն այս ելույթում կարելի է տեսնել, որ «երկաթե բռունցքը» Ալիևի հռետորաբանության մեջ վերածվել էր լիարժեք գիտակցված խորհրդանիշի, որի պարունակած իմաստները վերջինս բացատրելով ներկայացնում է ժողովրդին: Անհրաժեշտ է հավելել, որ նշված ելույթը, որը հեռարձակվում էր գրեթե բոլոր ադրբեջանական մեդիաներով, ուղեկցվում էր Ալիևի կողմից արդեն հիշատակված բռունցքի ժեստի և դրա նկարի պարբերական կրկնությամբ, ինչը «երկաթե բռունցք» արտահայտության հետ ձևավորում էր ամբողջական խորհրդանիշ՝ դառնալով հաղթանակի և Ալիևի հետ ասոցացվող հիմնական տարբերանշանը:

Կարելի է ասել, որ «երկաթե բռունցքի»՝ որպես հաղթանակի գլխավոր խորհրդանիշներից մեկի ձևակերպումը լիարժեք կերպով տեղի է ունենում նոյեմբերի 10-ին, երբ հաղթանակի առիթով նախագահ Ալիևը հերթական անգամ դիմում է ժողովրդին. «Նա (իմա՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը) չի ստորագրում իր բարի կամքով: Ստորագրում է երկաթե բռունցքի ճնշման տակ: ...Բոլորը տեսան մեր ուժը, բոլորը հասկացան, թե ինչ է մեր երկաթե բռունցքը» [Əliyev, 10.11.2020]: Հաշվի առնելով ելույթի կարևորությունը, դրանում «երկաթե բռունցքի» ընդգծված հիշատակումը կարելի է համարել դրա՝ որպես խորհրդանիշի յուրատեսակ պաշտոնականացման և իշխանական հռետորաբանության մեջ ամրագրման մեկնարկը: Այսպես, արդեն նոյեմբերի 11-ին վիրավոր զինծառայողների հետ հանդիպման ժամանակ ներկաներից մեկը, դիմելով Ալիևին, ասաց հետևյալը. «Դուք ձեր մի ելույթում, ավելի ճիշտ՝ վերջին ելույթում, դիմելով ժողովրդին, ասացիք, որ մենք հաղթեցինք թշնամուն որպես երկաթե բռունցք: Ես դա հետյալ կերպ կբնորոշեի. երկաթե բռունցքը մեր ժողովրդի միասնականությունն է, մեր ժողովրդի համախմբվածությունն է, մեր բանակի հզորությունը և, հատուկ ուզում եմ նշել, մեր ժողովրդի վստահությունը Ձեզ: Այսինքն, ես սա ասում եմ որպես ժողովրդի ներկայացուցիչ, դա ժողովրդի մեծ վստահությունն է Ձեզ: Դա ապահովեց հաղթանակ: Այդ բռունցքով մենք ճզմեցինք թշնամուն» [President.az]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրի նախագահի մասնակցությամբ նման միջոցառումները և դրանց լուսաբանումը մանրակրկտորեն կազմակերպվում են համապատասխան գերատեսչությունների կողմից, կարելի է ասել, որ վիրավոր զինծառայողի կողմից նման ելույթի հնչեցումը և ապա պետական և մերձիշխանական մեդիայի կողմից տարածումը պատահական չէ, այլ խորհրդանիշի կերտմանն ուղղված գիտակցված գործողություն:

Նոյեմբերի 10-ի ելույթից անմիջապես հետո մեկնարկած խորհրդանիշի հանրայնացման գործընթացին մասնակցում էին իշխանական հաղորդակցության բոլոր հիմնական դերակատարները՝ նախագահ Ալիևը, բարձրաստիճան պաշտոնյաները, պետական ինստիտուտները, իշխանական վերնախավը, մերձիշխանական քաղաքական, հասարակական գործիչներն ու կառույցները և այլք: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հաշվի առնելով Ադրբեջանում տիրող խիստ ավտորիտար համակարգը, որի առանձնահատկություններից են մեդիադաշտի հանդեպ իշխանության գրեթե լիարժեք վերահսկողությունը, ինչպես նաև խոսքի ազատության ու այլախոհության սահմանափակումները, ապա կարելի է ասել, որ «երկաթե բռունցքի» տարածումը ստացավ համատարած բնույթ: Այս հանգամանքը պատերազմում հաղթանակի ապահովված հուզական տրամադրությունների գերակայության պայմաններում արագացրեց խորհրդանիշի տարածումն ու ժողովրդականությունը:

«Երկաթե բռունցք» խորհրդանիշի պաշտոնականացման մասին է վկայում նաև փաստը, որ 2020 թ. նոյեմբերի 20-ին պատերազմում տարած հաղթանակի առթիվ ստեղծված «Հաղթանակի» շքանշանի վրա ["Zəfər" ordeni], որը հայտարարվեց երկրորդ բարձագույն պետական շքանշանը՝ «Հեյդար Ալիև» շքանշանից հետո, պատկերվեց արդեն հիշատակված բռունցքի նշանը (տե՛ս *Նկար 1*)։

«Երկաթե բռունցք» խորհրդանիշի պաշտոնականացման և հանրայնացման գործընթացը նոր ծավալներ ստացավ այն ժամանակ, երբ Ադրբեջանի քաղաքական վերնախավը որոշեց Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմի վարած ռազմական գործողությունները անվանակոչել «Երկաթե բռունցք» [Dəmir Yumruq əməliyyati][1]։ 2021 թ. սեպտեմբերին «Национальная оборона» պարբերականին տված հարցազրույցում Ալիևը այսպես էր մեկնաբանում այդ որոշումը. «Ինչ վերաբերում է հակահարձակման գործողության անվանը, բնականաբար, ռազմական գործողությունների ամենասկզբում որևէ անվանում չկար։ «Երկաթե բռունցք» տերմինը ես մի քանի անգամ օգտագործել էի ադրբեջանական ժողովրդին դիմելիս, երբ հայտնում էի ազատագրված քաղաքների ու գյուղերի մասին։ Մի քանի անգամ ես ասել էի, որ մեր երկաթե բռունցքը կջախջախի թշնամու գլուխը, եթե նա իր կամքով չհեռանա մեր գրավված տարածքներից։ Քանի որ դա հանրության կողմից դրական ընկալվեց, ես էլ որոշեցի գործողությունը կոչել հենց այդպես՝ «Երկաթե բռունցք»։ Սակայն դա միանգամից տեղի չունեցավ, այլ ռազմական գործողությունների որոշակի փուլում» [Национальная оборона, 2021]։ Ըստ էության, պատերազմում Ադրբեջանի հաջողությունները և դրանում Ալիևի միանձնյա դերն ընդգծելու անհրաժեշտությունը այն հիմնական երկու նախադրյալներն էին, որոնք հանգեցրին «երկաթե բռունցք» խորհրդանիշի կերտմանը։ Այս թեզը ավելի հիմնավոր է դարձնում այն հանգամանքը, որ Թուրքիայի պաշտպանության նախարարությունը, որն ակտիվորեն ներգրավված է եղել Հայաստանի ու Արցախի հանրապետությունների դեմ ադրբեջանական հարձակման կազմակերպման ու համակարգման գործում, այդ ռազմագործողությունները պաշտոնապես մինչ այժմ կոչում է «Մեկ հայրենիք» (Tek Vatan Harekâtı) անվամբ [Msb.gov.tr, 2022]։

«Երկաթե բռունցքի» շարունակական հանրայանացումը ապահովվում է տարբեր միջոցներով, որոնք, կախված ծավալներից և կարևորությունից, իրականացվում են կա՛մ պետության, կամ հասարակության տարբեր ներկայացուցիչների նախաձեռնությամբ։ Ընդ որում՝ խորհրդանիշի տարածումը կատարվում էր տարաբնույթ ձևաչափերով։ Առաջին հերթին անհրաժեշտություն կար այն ներառել հանրային տարածքներում։ Այս իմաստով հիշատակության է արժանի Ադրբեջանի տարբեր բնակավայրերում «Երկաթե բռունցքին» նվիրված արձանների ու հուշարձանների տեղադրումը։ Դրանցից առաջինը բացվեց Արցախի օկուպացված Հադրութ քաղաքի կենտրոնում 2021 թ. հունիսին (տե՛ս *Նկար 2*)։ Հուշարձանը, որը պատկերում է դեպի վեր խոյացող մեծ բռունցք՝ շրջապատված զինվորներով ու անօդաչու թռչող սարքերով, ըստ

[1] Անհրաժեշտ է նշել, որ Ադրբեջանը 2020 թ. սեպտեմների 27-ին Արցախի և Հայաստանի Հանրապետությունների դեմ սանձազերծած պատերազմը պաշտոնապես ներկայացնում է որպես «Հայաստանի կողմից Ադրբեջանի վրա հերթական հարձակման դեմ իրականացված հակահարձակվողական ռազմական գործողություն», ինչպես նաև որպես «Հայրենական պատերազմ»։

հեղինակի՝ ոգեկոչված է «Ադրբեջանի նախագահի բռունցքից» [Sherg.az, 2021]: Դրանից հետո «երկաթե բռունցքին» նվիրված հուշարձաններ են տեղադրվել նաև օկուպացված Արցախի այլ բնակավայրերում, ինչպես նաև Ադրբեջանում:

Այս տեսանկյունից մեկ այլ հիշարժան իրադարձություն կարելի է համարել 2023 թ. մայիսին օկուպացված Շուշի քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի վերանվանումը «Երկաթե բռունցքի փողոցի» [President.az, 10.05.2023]: Անվանակոչության պաշտոնական միջոցառմանը մասնակցել են Ադրբեջանի նախագահն ու վերջինիս տիկինը: Միջոցառման ընթացքում «երկաթե բռունցքը» ներկայացվեց որպես «Հայրենական պատերազմում Ադրբեջանի տարած պատմական հաղթանակը ապահոված և ժողովրդի անսասան միասնության խորհրդանիշ»[1]: Այս ամենից զատ, պետությունը կազմակերպում է «Երկաթե բռունցքին» նվիրված գիտաժողովներ, ֆլեշմոբեր, ինտելեկտուալ ու ստեղծագործական մրցույթներ, նկարահանվում են ֆիլմեր և տեսահոլովակներ, գրվում են գրքեր և այլն:

«Երկաթե բռունցք» խորհրդանիշի տարածմանն են մասնակցում նաև հանրության տարբեր ներկայացուցիչները: Վերջիններիս կողմից խորհրդանիշին նվիրված հարյուրավոր գրական ստեղծագործությունները, երգերը, հոլովակները, պաստառները, հոդվածները, որոնք իշխանության թողտվությամբ տիրաժավորվում են ավանդական ու նոր մեդիայի, ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով, հանգեցրել են «երկաթե բռունցքի» ժողովրդականության բարձր մակարդակին:

Նկար 1.



Նկար 2.

Խորհրդանիշի խոսույթային իմաստները և հակահայկական համատեքստը: «Երկաթե բռունցքը» որպես քաղաքական խորհրդանիշ պարունակում է տարբեր լսարաններին ուղղված մի

[1] Բռունցքի խորհրդանշական կարևորության մեկ այլ դրսևորում կարելի է համարել 2022 թ. վերջին Թուրքիայի և Ադրբեջանի միջև անցկացված համատեղ զորավարժությունը, որը կոչվում էր «Եղբայրական բռունցք» (”Kardeş Yumruğu” Tatbikatı):

քանի իմաստներ և միաժամանակ կատարում է մի շարք գործառույթներ: Ինչպես տեսանք, այն կերտումից ի վեր անցել է իմաստային որոշակի զարգացում: Մենք առանձնացրել ենք այս խորհրդանիշի հիմնական հինգ խոսույթային իմաստները, որոնք կախված ժամանակաշրջանից ու միջավայրից, դրսևորվում են տարբեր ուժգնությամբ:

Մինչ այդ անհրաժեշտ է նշել, որ դեպի վեր բարձրացված բռունցքի խորհրդանիշը ամենատարածվածներից մեկն է ժամանակակից աշխարհում: Քաղաքական նշանակությամբ այն սկսել է լայնորեն կիրառվել 20-րդ դարի սկզբից և հանդիպում է տարբեր երկրներում [Davidson, Blais, 2018]: Այն որպես կանոն խորհրդանշում է դիմադրություն, պայքար և միասնականություն: Հիմնվելով մեր կողմից կատարված ադրբեջանական քաղաքական և սոցիալ-մշակութային իրողությունների մշտադիտարկման վրա՝ կարող ենք ասել, որ Ադրբեջանում այս խորհրդանիշը ձեռք է բերել խոսույթային 5 հիմնական իմաստներ:

1. Հաղթանակի խորհրդանիշ - «Երկաթե բռունցքը» թե՛ Ադրբեջանում, թե՛ Ադրբեջանի սահմաններից դուրս առաջին հերթին ընկալվում է որպես Արցախյան երրորդ պատերազմում տարած հաղթանակի հիմնական մի քանի խորհրդանիշներից մեկը [Anadolu Ajansı, 2021]: Այստեղ տեղին է նշել, որ 2020 թվականից ի վեր Ադրբեջանում ձևավորվել են հաղթանակի մի քանի խորհրդանիշներ, որոնցից մեկը ունի պաշտոնական կարգավիճակ: Խոսքը վերաբերում է «xarı bülbül»-ին, որը պատերազմից հետո հայտարարվել է որպես պատերազմում զոհվածների և հաղթանակի խորհդանիշ[1]: Անհրաժեշտ է հավելել, որ «երկաթե բռունցքը» հաճախ ներկայացվում է ոչ միայն որպես անցյալի հաղթանակի, այլև ապագայի նոր հաղթանակների խորհրդանիշ[2]: Ընդ որում՝ այդ նոր հաղթանակները գերազանցապես հակահայկական քաղաքականության ծիրում են:

2. Միասնության խորհրդանիշ - Ինչպես նշեցինք վերևում՝ բռունցքի նշանն ընդհանրապես խորհրդանշում է միասնականությունը: Արցախյան երրորդ պատերազմում տարած հաղթանակը հնարավորություն է տվել Ադրբեջանի իշխանությունների ձևավորել ադրբեջանական հավաքական ինքնության նոր գործոն, որի խորհրդանիշը հենց «երկաթե բռունցքն է»: Ընդ որում, Ադրբեջանում հավաքական ինքնության ճգնաժամը հաշվի առնելով՝ «երկաթե բռունցքի» խորհրդանիշի խոսույթային այս իմաստն էլ ավելի է կարևորվում: Սրանով կարելի է բացատրել Ալիևի և բարձրաստիճան այլ գործիչների կողմից միասնականության գործոնի հետևողական շեշտադրումը «երկաթե բռունցքի» համատեքստում:

3. Ալիևի անձնական լեգիտիմության խորհրդանիշ - «Երկաթե բռունցքի» հեղինակը Իլհամ Ալիևն է, ինչը կարևոր խոսույթային մեկ այլ իմաստ է հաղորդում այս խորհրդանիշին: Ալիևի հետ ուղիղ ասոցացվող «երկաթե բռունցք» խորհրդանիշի սրբազնությունը (սակրալություն) նպաստում է վերջինիս քաղաքական իշխանության ամրապնդմանը և լեգիտիմության բարձրացմանը հանրային ընկալումներում: «Երկաթե բռունցքի» թե՛ բանավոր, թե վիզուալ հիշատակումները

[1] Կովկասյան օֆրիս ծաղկի (Ophrys caucasica) տեսքով այս նշանը ևս լայնորեն տարածվում է պետության և իշխանության կողմից:

[2] Այստեղ նկատելի են որոշ նմանություններ թյուրքական ժողովուրդների մշակույթում տարածված «կարմիր խնձորի» (կամ «ոսկե խնձոր) խորհրդանիշի հետ, որի խոսույթային առաջին իմաստը մշտապես դեպի նոր նվաճումների նպատակակետ սահմանելն է (Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., 317):

արձանագրում են, որ այն առաջին հերթին պատկանում է նախագահ Ալիևին: Սրբազնային հատկանիշների վառ դրսևորում կարելի է համար Ադրբեջանի քաղաքացիների կողմից Ալիևի բռունցքի վերաբերյալ արտահայտած վերաբերմունքը: Այսպես, քաղաքացիներից մեկը, նամակով դիմելով նախագահին, նշում է. «Թո՛ղ ես դուրբան լինեմ Ձեր բռունցք դարձած ձեռքին» [President.az, 29.10.2020]: Նմանատիպ օրինակները բազմաթիվ են և վկայում են այս ընկալման լայն ժողովրդականության մասին: Պետք է նշել նաև, որ բարձրացված բռունցքի նշանը տարբեր համատեքստներում ներկայացվում է որպես ժողովրդական կամքի դրսևորում (սեմիոտիկ առումով՝ բռունցքը «ժողովրդի միասնական մարմնի» շարունակությունն է): Ուստի այս իմաստով ևս «երկաթե բռունցքը» հավելյալ լեգիտիմություն է հաղորդում Ալիևի կերպարին՝ որպես ժողովրդական կամքը իրականացնող գործիչ:

4. Ռազմականացված ուժի խորհրդանիշ - Խոսելով պետության արտաքին քաղաքական խնդիրների և նպատակների մասին՝ Ադրբեջանի ղեկավարությունը պարբերաբար ևս կիրառում է «երկաթե բռունցքի» խորհրդանիշը՝ որպես առկա խնդիրները լուծելու հիմնական միջոց, եթե մնացած գործիքները (իմա՝ դիվանագիտական) արդյունավետ չլինեն: Այս տեսանկյունից «երկաթե բռունցքը» խորհրդանշում է արտաքին քաղաքականության շարունակական ռազմականացումը (միլիտարիզացիան) և կոշտ ուժի գործիքակազմի գերակայությունը Ադրբեջանում:

5. Հակահայկականության խորհրդանիշ - Հաշվի առնելով այն, որ «երկաթե բռունցքը» ստեղծվել է Հայաստանի ու հայության դեմ պայքարում, ապա այս խորհրդանիշի վերոնշյալ գրեթե բոլոր խոսույթային իմաստները պարունակում են հակահայկականության տարրեր: Միաժամանակ, պատերազմից հետո Ի. Ալիևը բազմիցս հիշատակել է «երկաթե բռունցքը» որպես Հայաստանի դեմ պայքարի հիմնական գործիք: Խորհրդանիշի այդպիսի մեկնաբանությունը կարելի է գտնել Ալիևի այս խոսքերում. «Երկաթե բռունցքը, պատերազմի ու հաղթանակի խորհրդանիշը, դեռ իր տեղում է և թո՛ղ ոչ մեկ չմոռանա այդ մասին» [EVNreport.com, 2022]: Շարունակվող հակահայկական քաղաքականության պայմաններում [Պողոսյան, Գեղամյան, 2022] «երկաթե բռունցքը» ներկայացվում է որպես Հայաստանի դեմ Ադրբեջանի սպառնալիքները և նկրտումները մարմնավորող նշան: Ասվածի վկայություն են Ալիևի հետևյալ խոսքերը. «Երկաթե բռունցքն իր տեղում է և եթե անհրաժեշտ լինի, մենք կարող ենք նրանց այնպես հարվածել, որ այս ամենը (հայերն ու Հայաստանը) վերջանա» [APA.az, 14.04.202]: Մեկ այլ ելույթում նա նշել է. «Եթե որևէ մեկը Հայաստանում մտածի ռևանշի մասին, ապա նրանք նորից գործ կունենան մեր երկաթե բռունցքի հետ: Այս երկաթե բռունցքը ջարդել է նրանց ողնաշարը և ջախջախել է նրանց գլուխը» [APA.az, 15.01.2021]: Պետք է նշել նաև, որ «Երկաթե բռունցքի» խորհրդանիշը վերածվել է հայերի դեմ ատելության քարոզի կարևոր միջոցներից մեկին [Tatoyan, 2022]: Այս տեսանկյունից այն որպես իր ուղերձների լսարան ներառում է նաև Հայաստանն ու աշխարհասփյուռ հայությանը:

Վերոնշյալ բոլոր խոսույթային իմաստները փոխլրացնում են միմյանց և ձևավորում են «երկաթե բռունցքի» հիմնական բովանդակությունը՝ տեղավորելով այն ժամանակակից Ադրբեջանի քաղաքական մշակույթում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս խորհրդանիշը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, ապա կարելի է ենթադրել, որ այն, ժամանակի ընթացքում կրելով որոշակի փոփոխություններ, ձեռք կբերի հիմնական կանոնական իմաստ(ներ)ը:

Եզրակացություն: Այսպիսով, «Երկաթե բռունցքի» խորհրդանիշը, ձևավորվելով 2020 թ. Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում, աստիճանաբար վերածվել է ժամանակակից

Ադրբեջանի քաղաքական մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկի: Այն ունի թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարաններին ուղղված բազմաշերտ ուղերձներ, որոնք դեռևս գտնվում են ձևավորման փուլում և համահունչ են Ադրբեջանի քաղաքական և սոցիալ-մշակութային իրողություններին: Իշխանության կողմից այս խորհրդանիշի կառուցարկումը և շարունակական հանրայնացումը կարելի է համարել գիտակցված քաղաքական գործողություն, որը նպատակ ունի ապահովել իշխանության վարած ներքին ու արտաքին քաղաքականության շուրջ հանրային աջակցություն և լեգիտիմություն հաղորդել վերջինիս: «Երկաթե բռունցքի» խորհրդանշած խոսույթային բոլոր իմաստներն ունեն ընդգծված հակահայկական տարր և էլ ավելի են խորացնում Ադրբեջանում Հայաստանի և հայության դեմ ուղղված հռետորաբանությունը:

Գրականության ցանկ

Պողոսյան Ն., Գեղամյան Վ. և ուրիշներ, 2022, «Ատելության խոսքի» դասական թիրախները. Հայերն ու Հայաստանը թուրքական և ադրբեջանական մեդիա դաշտում 2019-2021 թվականներին, Երևան:

Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ. և ուրիշներ, 2018, Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան.

Колоницкий Б. И., 2001, Символы власти и борьба за власть. К изучению политической культуры российской революции 1917 года, СПб..

Azerbaijani ongoing hatred policy towards Armenians: A state sponsored motivation for atrocities, Center for Law and Justice "TATOYAN" foundation, Yerevan, 2022.

Davidson K., Blair J., 2018, Semiotic Analysis of the Raised Fist Emoji As a Sign of Resilience, Semiotics 2018: Resilience in an Age of Relation, pp. 31-45, https://doi.org/10.5840/cpsem20183.

Hardy R., Webber D., Is It "President" or "president" of the United States, Presidential Studies Quarterly 38, no. 1 (2007), 159-182.

Hobsbawm E., 2012, Introduction. Inventing Traditions, in The Invention of Tradition (ed. Hobsbawm E., Ranger T.), Cambridge University Press, 1-14.

«Все 44 дня мы шли только вперед!», Национальная оборона, 24.09.2021, https://oborona.ru/product/zhurnal-nacionalnaya-oborona/vse-44-dnya-my-shli-tolko-vpered-42610.shtml (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Ильхам Алиев: Символом нашей Победы был железный кулак, теперь у нас есть еще и меч – ВИДЕО, 1news.az, 13.01.2021, https://1news.az/news/20210113031021303-Ilkham-Aliev-Simvolom-nashei-Pobedy-byl-zheleznyi-kulak-teper-u-nas-est-eshce-i-mech-VIDEO (վերջին մուտքը՝ 10.01.2024).

From the Dictator's Mouth, EVNreport.com, 21.12.2022, https://evnreport.com/politics/from-the-dictators-mouth/ (վերջին մուտքը՝ 10.01.2024).

President Ilham Aliyev attended opening of Military Trophy Park in Baku, APA.az, 14.04.2021, https://apa.az/en/xeber/domestic-news/President-Ilham-Aliyev-attended-opening-of-Military-Trophy-Park-in-Baku-colorredUPDATEDcolor-346597 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

President Ilham Aliyev laid foundation stones for Fuzuli-Shusha highway and Fuzuli airport in Fuzuli district, visited the city of Shush, APA.az, https://apa.az/en/xeber/nagorno_garabagh/President-Ilham-Aliyev-laid-foundation-stones-for-Fuzuli-Shusha-highway-and-Fuzuli-airport-in-Fuzuli-district-visited-the-city-of-Shush-colorredUPDATED-1color-340232 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Today, Iron Fist is a symbol of our unity - President Ilham Aliyev, Trend.az, 01.01.2024, https://en.trend.az/azerbaijan/politics/3844480.html (վերջին մուտքը՝ 10.01.2024).

"Dəmir yumruq" abidəsinin memarı: "Əsəri beş aya hazırlamışam", Sherg.az, 26.06.2021, https://sherg.az/cemiyyet/167003 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Əliyev I., Xalqa müraciət, President.az, 20.10.2020, https://president.az/az/articles/view/43696 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Əliyev I., Xalqa müraciət, President.az, 08.11.2020, https://president.az/az/articles/view/45756 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Əliyev I., Xalqa müraciət, President.az, 10.11.2020, https://president.az/az/articles/view/45924 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

İlham Əliyev 1 saylı Kliniki Tibbi Mərkəzdə müalicə olunan hərbçilərlə görüşüb, President.az, 11.11.2020, https://president.az/az/articles/view/46142 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

İlham Əliyev və birinci xanım Mehriban Əliyeva Şuşada Dəmir Yumruq küçəsinin lövhəsinin açılışında iştirak ediblər, President.az, 10.05.2023, https://president.az/az/articles/view/59694 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Mürvət Rəhimovdan, Şərur, Azərbaycan, Presindent.az, 29.10.2020, https://president.az/az/articles/view/44843 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Azerbaycan'ın Karabağ zaferinin 1. yılında Bakü'de 'Demir yumruk' etkinliği düzenlendi, Aa.com.tr, 08.11.2021, https://www.aa.com.tr/tr/dunya/azerbaycanin-karabag-zaferinin-1-yilinda-bakude-demir-yumruk-etkinligi-duzenlendi/2414851 (վերջին մուտքը՝ 10.01.2024).

Millî Savunma Bakanı Hulusi Akar, Tek Vatan Harekâtı'nda Gazi Olan Azerbaycan Türkü Askerlerimizle Bir Araya Geldi, Msb.gov.tr, 18.05.2022, https://www.msb.gov.tr/SlaytHaber/1852022-87463 (վերջին մուտքը՝ 10.01.2024).